



«Նոր ժամանակի

Կ Ր Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Սովորողների մեջ արժեքային
համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում*

Առարկան՝ *Ինֆորմատիկա*

Հետազոտող ուսուցիչ՝ *Ռեհանյան Անահիտ Շիրակի*

Ուսումնական հաստատություն՝ *ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց*

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Դասընթացի պլան
3. Դասընթացի դասավանդման ինքնավերլուծություն
4. Դասընթացի ընթացքում հաղորդակցման կազմակերպումը աշակերտների հետ
5. Դասի ամփոփում, ստուգողական հարցերի առաջադրում
6. Եզրակացություն
7. Օգտագործված գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր երկրի ու ժողովրդի առաջ իր մեծ ու պատասխանատու պարտքը կատարելու, անցյալ, ներկա ու ապագա սերունդների միջև կապ ստեղծելու առանձնահատուկ առաքելություն ունի հանրակրթական դպրոցի ուսուցիչը: Նա պետք է կարողանա սեր, հետաքրքրություն, ավելին իմանալու և նորը ստեղծելու կարողություններ զարգացնել աշակերտի մեջ: Իսկ դրա համար անհրաժեշտ են մանկավարժական որոշակի մեթոդներ ու հնարներ գործադրել սովորողների իմացական գործընթացները՝ ուշադրությունը, մտածողությունը, երևակայությունը, ստեղծագործական ունակությունները զարգացնելու համար:

Ուսուցչի աշխատանքը անընդհատ ստեղծագործական աշխատանք է. նա պրպտում ու փնտրում է ուսուցման ու դաստիարակության ձևեր, մեթոդներ, ուսումնական գործընթացը կառավարելու հոգեբանական լծակներ:

Այսօր, քան երբևէ, շատ է կարևորվում աշակերտի հոգեկան առողջության, անհատական առանձնահատկությունների, ընտանեկան ու ընկերական միջավայրերի նկատառումները: Հասարակության զարգացման խելակորույս արագ տեմպը և՛ դրական, և՛ բացասական ազդեցություն է ունենում դեռահասի հոգեկերտվածքի ձևավորման վրա, ուստի ուսուցիչը պետք է նրբանկատորեն հաշվի առնի այս հանգամանքը ուսումնադաստիարակչական գործընթացում:

Անկեղծ լինելը ու ասելը, որ մեր կրթական համակարգը այսօր դեռևս փնտրտուքների մեջ է, և գիտելիքների հաղորդման ու արժեքային համակարգի ձևավորման առումով ուսուցիչը շատ անելիքներ ունի:

Գաղտնիք չէ, որ այս սերունդն ավելի զարգացած, լայն մտահորիզոնի տեր, ինքնակրթման մեծ հնարավորություններ ունեցող սերունդ է, և, բնականաբար, նրան հին մեթոդներով, ձևերով դասագրքային կրթություն մատուցելն անգամ ծիծաղելի է:

Այսօր ուսուցչից պահանջվում է ոչ միայն տիրապետել արագ զարգացող տեխնոլոգիաներին, այլև դրանք ստեղծագործաբար ներդնել ուսումնադաստիարակչական գործընթացի մեջ, որպեսզի աշակերտին կարողանա բերել կրթական տիրույթ:

Ֆիզիկամաթեմատիկական ուղղվածություն ունեցող ավագ դպրոցում իհարկե ավելի շատ են պահանջները «Ինֆորմատիկա» առարկայի նկատմամբ, ուստի ուսուցչից պահանջվում է ոչ միայն պատշաճ մակարդակի ուսուցում կազմակերպել առարկայական չափորոշիչներին համապատասխան, այլև ստեղծագործական մոտեցում ցուցաբերել աշակերտների հմտությունների և ստեղծագործական մղումները կյանքի կոչելու համար (ռոբոտաշինություն, նոր տեխնոլոգիաների ստեղծում, հեռահաղորդակցություն և այլն):

Երկար տարիներ ՅԱՊՅ Երևանի ավագ դպրոցում դասավանդում եմ «Ինֆորմատիկա» առարկան: Դասարանային խմբերը ձևավորվում են տարբեր դպրոցներից եկած աշակերտներից, հետևաբար, ելնելով դպրոցների ունեցած տեխնիկական հնարավորություններից, տարբեր են լինում աշակերտների՝ նախորդ տարիներին ստացած գիտելիքների պաշարները: Այս փաստը դասավանդման գործընթացը սկսելու առաջին դժվարությունն է, քանի որ անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալու նախորդ տարիներին անցած թեմաներին գոնե գիտելիքների նվազագույն մակարդակ ապահովելու համար: Հենց այս փուլում էլ ձևավորվում է ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունը, փոխըմբռնումը, աշակերտների հետաքրքրասիրությունների, նորարարական մտածողության հիմքեր դնելու առաքելությունը:

Շատ կարևոր է ուսուցչի ներածական խոսքը, մուտքը դեպի Տեղեկատվական Տեխնոլոգիաների ոլորտ, մի բան, որ այսօր շատերին է հետաքրքրում ու գրավում:

Մեր դպրոցում, քանի որ միայն բնագիտամաթեմատիկական հոսքի դասարաններ են, ինֆորմատիկային զուգահեռ ուսումնասիրվում են Տեղեկատվական Տեխնոլոգիաներ և Հեռահաղորդակցության հիմունքներ առարկաները: Այս առարկաների ներմուծումը դասընթաց ավելի հետաքրքիր ու ցանկալի են դարձնում ոլորտի նկատմամբ ձգտումը, քանի որ այդ երեք առարկաների միաժամանակյա ուսուցումը խթանում է աշակերտների տեխնիկական մտածողության զարգացումը:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՊԼԱՆ

Ավագ դպրոցի ինֆորմատիկա առարկայի դասընթացում ուսուցանվում են.

- Ինֆորմացիայի ներկայացման ձևերը համակարգչում,
- Համակարգիչների կառուցվածքային առանձնահատկությունները,
- Microsoft Office ծրագրային փաթեթը, հնարավորություններն ու դրանց կիրառումը,
- Խնդիրների ալգորիթմների մշակումը,
- Ալգորիթմների ներկայացումը C++ ծրագրային լեզվով,
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- Հեռահաղորդակցության հիմունքներ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Առարկայի դասավանդումը ավելի մատչելի և հետաքրքիր դարձնելու համար չեմ բավարարվում միայն դասագրքով: Օգտագործելով գործնական գիտելիքների իմ պաշարը՝ ներկայացնում եմ նյութը ավելի պատկերավոր ու բովանդակալից՝ նաև ներառելով խնդիրների, ծրագրերի ավելի ժամանակակից մոտեցումներ ու առաջարկներ, քանի որ առարկան գիտության այն բնագավառներից է, որի համար տեխնիկական գրականությունը էապես հետ է մնում գործնական գիտելիքներից ու ինֆորմացիոն առաջընթացից:

Իրար շահակապաճ այս երեք առարկաների դասավանդումը և՛, շատ հետաքրքիր է, և՛ բովանդակալից, և՛ աշակերտների երևակայությունը զարգացնող, նաև առաջ մղող:

Առաջին հայացքից հեշտ թվացող և լայն տարածում ունեցող այս ոլորտն ունի իր բարդությունները, ինչը աշակերտների մոտ սկզբնական շրջանում հիասթափություն է առաջացնում: Այս խոչընդոտի հաղթահարումը պահանջում է ժամանակի զոհում, համբերատարություն և բոլորին հայտնի համակարգչային աշխարհը աշակերտին օգտագործողի փոխարեն ստեղծողի տեսանկյունից ներկայացնելու հմտություններ: Այստեղ օգնության է գալիս SS ժամերին համակարգչի կառուցվածքին ծանոթանալու նպատակով քանդելու, ուսումնասիրելու և նորից հավաքելու գործընթացը, երբ աշակերտն իր ձեռքն է առնում համակարգչի յուրաքանչյուր դետալը, ուսումնասիրում, այնուհետև նորից տեղադրում և գործնականորեն «հավաքում» համակարգիչ: Աներևակայելի հրճվանք է ապրում դեռահասն այդ պահին:

Այս պարագայում դասապրոցեսի ընթացքում կարևոր է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ աշակերտի լարվածությունն ու կաշկանդվածությունը կարելի կլինի հասցնել նվազագույն մակարդակի, նա ազատ կլինի հարցադրումներ կատարելու, խնդիրների ու տեսակետների մասին իր կարծիքը արտահայտելու, մեկնաբանելու մեջ:

Իհարկե այս ամենին նպաստող ամենակարևոր գործոններից են յուրաքանչյուր աշակերտի հարցը, կարծիքը մանրամասն լսելն ու վերլուծելը ուսուցչի կողմից, խնդիրների լուծման տարբեր տեսակետների ազատ ներկայացումն ու խմբակային քննարկումները դասարանում: Այս ամենին եթե գումարվում է նաև առաջին խնդրի ալգորիթմի ու ծրագրի մշակումը և համակարգչով այնքան ցանկալի արդյունքի ստացումը, ապա կարող ենք ասել, որ աշակերտների մոտձևավորվում է մեծ ոգևորություն և մոտիվացիա համակարգչային աշխարհը էլ ավելի բացահայտելու, տարբեր խնդիրների ծրագրային իրականացման տարբերակներ փնտրելու հարցում:

Դասավանդման հիմնական խնդիրներից է նաև առարկայի հանդեպ աշակերտների հետաքրքրության պահպանումը, որը կօգնի հետագա մասնագիտական կողմնորոշման հարցում: Կարևոր են համարում ուսուցիչ-աշակերտ ճիշտ հարաբերությունների ստեղծումը, որը պետք է հիմնված լինի աշակերտի աչքում ուսուցչի բարձր հեղինակության, փոխադարձ հարգանքի, աշակերտի կարծիքը հաշվի առնելու, ինչու չէ, նաև նրա առաջարկները դասավանդման պրոցեսում օգտագործելու վրա: Դասավանդման ընթացքում նյութը ավելի տպավորիչ դարձնելու համար օգտագործվում են տարբեր հնարքներ՝ նաև ոչ հավաստի լուծումներ առաջարկելով, որի վերլուծությունն ու գործնական իրագործումը թողնվում է աշակերտներին՝ այսպիսով նպաստելով սեփական գիտելիքներով և փորձերով ճշգրիտ եզրակացություն անելուն: Սրա շնորհիվ աշակերտների մոտ ձևավորվում է մշակույթ. Չվստահել որ և է անձի կողմից պարտադրված գիտելիքին, այլ ստեղծել սեփական գիտելիքների պաշար, ստեղծել ապագա ինքնահաստատման հիմք:

«Ինֆորմատիկա» առարկայի առանձնահատկություններից է թեմաների փոխկապակցվածությունը. այսինքն՝ որպեսզի աշակերտը հասկանա նոր նյութը, անպայմանորեն պետք է իմանա նախորդները: Սա է պատճառը, որ կարևորում են յուրաքանչյուր դասին նոր նյութը մատուցելուց առաջ հարցուպատասխանի միջոցով վեր հանել նախորդ թեմայի հիմնահարցերը: Առարկայի յուրացման գործընթացում կրկնության, անընդհատ նախորդ թեմաներին անդրադառնալու, հիշելու պահերը թույլ են տալիս աշակերտին ավելի լավ մտապահել անցածը, ապա նաև հնի վրա նոր նյութը հեշտությամբ յուրացնել:

Դասի ընթացքում շատ հաճախ անհրաժեշտություն է առաջանում բացի տեսական նյութից օրինակների տեսքով ներկայացնել նաև նմանատիպ խնդիրների լուծում: Կարելի է ներկայացնել լուծման տարբեր եղանակներ և մեթոդներ, ինչպես նաև քննարկել մեթոդներից լավագույնի ընտրության ուղիներն ու չափանիշները:

Ակտիվ և հետաքրքրված աշակերտների համար անհրաժեշտ է լինում նախատեսել նաև տրամաբանական բարդ խնդիրներ դասի հանդեպ հետաքրքրվածությունը բարձրացնելու նպատակով, ինչպես նաև առաջադրել անհատական առաջադրանքների ցանկ, որոնց կատարումը կնպաստի աշակերտների տրամաբանական մտածողությանը: Այսպիսի առաջադրանքները տրամադրվում են բոլոր ցանկացողներին, և տրվում է որոշակի ժամանակ դրանց կատարման համար: Այդ ընթացքում աշակերտը կարող է խորհրդատվություն ստանալ ուսուցչից և կատարել նախատեսված առաջադրանքը: Նմանատիպ առաջադրանքները հաճախ առաջադրվում են աշակերտների խմբերին, ինչը ակտիվ մրցակցություն է առաջացնում նրանց միջև: Սա նաև մոտիվացնում է աշակերտներին ձգտելու էլ ավելիին:

Ցանկացած նոր նյութ լսելիս մարդու ուշադրությունն առավելագույնը քսան րոպեից հետո շեղվում է: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ դասապրոցեսի ընթացքում միապաղաղ, պատմողական վիճակը փորձում են ընդհատել որևէ տրամաբանական խնդրի, հարցի քննարկումով, աշակերտների ներգրավումով նոր թեմայի բացահայտման մեջ: Հաճախ դասի ընթացքում աշակերտների նախաձեռնությամբ ընդհատվում է բուն խնդրի լուծման գործընթացը. նրանք ներկայացնում են տվյալ հարցի շուրջ լսած, կարդացած տեխնոլոգիական վերջին նորությունները, որոնք քննարկում ու վերլուծում ենք միասին: Սա շատ գովելի և խրախուսելի է իմ կողմից, ուստի յուրաքանչյուր աշակերտ շահագրգռված է լինում մի նոր նյութ կարդալու, ուսումնասիրելու և դասարանում ներկայացնելու հարցում:

Դասապրոցեսի ընթացքում չի լինում անտեսված աշակերտ: Յուրաքանչյուրն իր գիտելիքի և ուժերի ներածի չափով ընդգրկվում է ընդհանուր գործընթացին: Շատ են կարևորում քննարկումները դասի ժամանակ, որն օգնում է խնդրի լուծումից հիասթափված աշակերտներին այն հաջորդ անգամ հաղթահարելի դարձնելու հարցում: Առարկայի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ, լինելով մեծ տեմպերով զարգացող գիտություն, պահանջում է մեծ կամքի ուժ և համբերություն:

Յուրաքանչյուր մարդ ունի երազանք, որն իրականացնելու համար անհրաժեշտ է կերտել մասնագիտական մտածողություն, զարգացնել երևակայությունը և ճիշտ օգտագործել հատկացված ժամանակը: Առանց նպատակասլացության, ներքին կարգապահության և համբերատարության չես կարող հասնել նպատակին: Սա է այն կարգախոսը, որով ես դիմում եմ աշակերտներին: Նպատակին հասնելու ուղին լի է խնդիրներով և խոցելի տեղերով, հետևաբար փորձում եմ ներկայացնել նաև

շեղումներն ու թուլությունները այդ ճանապարհին, և դրանց հաղթահարման թերևս ամենակարևոր պայմանը, այն է՝ երբեք չհանձնվել ու փորձել միշտ առաջ ընթանալ:

Բարդությունը հիմնականում լինում է սկզբնական շրջանում, երբ ձևավորվում են ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները, փոխըմբռնումը: Հարաբերությունների ճիշտ կառուցման համար պետք է հաշվի առնել աշակերտների տարիքային առանձնահատկությունները, լինել համբերատար, լսել յուրաքանչյուրի կարծիքը, փորձել ծանոթանալ ներքին հետաքրքրություններին:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՅԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՅԵՏ

Կյանքի յուրաքանչյուր նոր փուլի սկիզբ ճգնաժամային է՝ հատկապես դեռահասի համար: Ուսուցչի խնդիրն է օգնել աշակերտին հաղթահարելու անցումային պահը:

Իմ կարծիքով դասի ժամանակ տիրող երկարատև բացարձակ լռությունը չի նպաստում նյութի ընկալմանը: Դասի ընթացքում պետք է ապահովել ուսուցիչ-աշակերտ լիարժեք շփում հարց ու պատասխանի միջոցով, որը հնարավորություն կընձեռնի աշակերտին ազատ արտահայտել իր կարծիքը:

Աշակերտի կողմից նյութը ընկալելու կարևոր գործոններից է ուսուցչի՝ դասը մատուցելու ձևը, ձայնի տոնայնությունն ու շեշտադրումները: Լսելի լինելու համար հարկավոր է խուսափել հրամայական բարձր ձայնից, պետք է լինել հստակ, գրագետ և համոզիչ: Մեծ նշանակություն էմ տալիս նաև ուսուցչի արտաքին տեսքին ու կեցվածքին, որը զգաստություն է հաղորդում և ստիպում աշակերտներին կենտրոնանալ: Ելնելով առարկայի առանձնահատկությունից՝ ուսուցիչը պետք է լինի տեղեկացված, իմանա գիտության և տեխնիկայի ժամանակակից մոտեցումները, նորությունները, որը միանշանակ կնպաստի առարկայի հանդեպ հետաքրքրությունը պահպանելուն և ավելացնելուն:

ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ, ԱՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ

Դասի ամփոփումը շատ կարևոր փուլ է համարում, քանի որ այն թույլ է տալիս ուսուցչին մեկ անգամ ևս համոզվել նախատեսված նյութի ամբողջական ներկայացման մեջ, իսկ աշակերտներին՝ վերհիշել դասի ընթացքում քննարկված հարցերը և ամրացնել դրանք հիշողության մեջ:

«Ինֆորմատիկա» առարկայի դասավանդումը թույլ է տալիս ստեղծել միջառարկայական կապեր, թափանցել գիտության, մշակույթի տարբեր ոլորտներ և զարգացնել աշակերտի մտահորիզոնն ու գեղագիտական ճաշակը:

Այս գործընթացը հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին իրականացնել անհատական աշխատանք և դրանով իսկ գնահատել իր ստացած գիտելիքների պաշարը: Անհրաժեշտ է աշակերտի գիտակցությունը հասցնել այն աստիճանի, որ գնահատվում և կարևորվում է ինքնուրույն աշխատանքը, այլ ոչ թե արտագրությունը կամ այլ աղբյուրներից օգտվելը: Կարևորում են աշակերտների մոտ ոչ միայն գրավոր, այլև բանավոր խոսքը, երբ կարողանում են իրենց աշխատանքը գրագետ ներկայացնել:

Այս ամենը հնարավորություն է տալիս աշակերտին ինքնուրույն աշխատել, ձևավորել փորձ և կառուցել նոր, արդիական կառուցվածք, գտնել նոր հետաքրքրություններ ապագայի նկատմամբ: Սա ուղղված է մի նպատակի՝ առաջադրված ցանկացած խնդրի համար կարողանալ մշակել մոտեցման ձևը, լուծման համար անհրաժեշտ քայլերի հաջորդականությունը, ստացված արդյունքի վերլուծումը: Սրա շնորհիվ անպայմանորեն բարձրանում է աշակերտի մասնագիտական ինքնագնահատականը:

Այստեղ աշակերտը հանդես է բերում նաև իր դիզայներական, տարբերվող երևակայության և աշխարհընկալման կարողությունները: Շատ ոգևորությամբ են արձագանքում աշակերտները գործնական աշխատանքի այս տեսակի կատարմանը:

Դրանք հիմնականում կապվում են տոների, պատմական հիշարժան օրերի, բնապահպանության, արդի հուզող հարցերի վերհաման հետ: Կարելի է ասել, որ մեր

աշակերտներն աներևակայելի աշխատանքներ են ներկայացնում, որոնց հիման վրա հաճախ կազմակերպվում են ցուցադրումներ՝ սահիկաշարերի և տեսահոլովակների տեսքով:

Ամփոփիչ ստուգումները կազմակերպվում են նաև հետազոտական աշխատանքների տեսքով: Նման աշխատանքների գրավականն ու հաջողությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր աշակերտ ոչ միայն սահիկաշար և գրավոր շարադրանք է պատրաստում, այլև բանավոր ներկայացնում է իր կատարած աշխատանքը: Սրանով զարգացնում ենք աշակերտի գրական, մաքուր հայերենով արտահայտվելու ունակությունը, բանավոր խոսքը: Ավելին, ներկայացված աշխատանքի ունկնդիր-աշակերտները հարցերի, լրացումների, ինչու ոչ նաև դիտողությունների միջոցով ամբողջացնում են կատարված աշխատանքի իրական գնահատականը: Այս տիպի առաջադրանքները աշակերտներին մղում են նորարական մտահղացումներով ձեռքբերումների ռոբոտաշինության և տեխնոլոգիական այլ ոլորտներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով աշակերտ ուսուցիչ փոխհարաբերությունները՝ կարող ենք ասել, որ չկան որոշակի ստանդարտներ, որ դրանք քարացած չեն: Անհրաժեշտ է ունենալ ճկուն մոտեցում յուրաքանչյուր աշակերտի համար, հաշվի առնել , որ աշակերտների հետաքրքրությունները, վարքը, աշխարհայացքը փոխվում են ամեն տարվա ու սերնդի հետ: Դասընթացները պետք է կազմակերպվեն՝ կիրառելով նորագույն տեխնոլոգիաներ և մեթոդներ: Հարկավոր է ձևավորել անհատական մոտեցում յուրաքանչյուր աշակերտին, որը ստիպում է աշակերտին լինել ուսուցչի ուշադրության կենտրոնում, ինչը և առաջացնում է ինքնավստահություն և մոտիվացիա: Այս ամենին կարելի է հասնել միայն ուսուցչի՝ որակյալ ու պատասխանատու, անշահախնդիր, անմնացորդ նվիրումով աշխատանքի շնորհիվ: Միայն այդ դեպքում է ուսուցիչը ստանում իր աշխատանքի պտուղները՝ տեսնելով ժամանակի պահանջներին համապատասխան գիտելիքներով զինված իր սաներին:

Յուրաքանչյուր դասից հետո ուսուցիչն ինքն իրեն հարց է տալիս՝ ի՞նչ տվեցի աշակերտին, և ի՞նչ տվեց դասն ինձ:

Այսօրվա ուսուցիչը սոսկ գիտելիքներ հաղորդող չէ. նա պարտավոր է տիրապետել մանկավարժության և հոգեբանության ամենանուրբ տարրերին, որպեսզի կարողանա դասարան մտնել և դաս վարել:

Սրան պետք է ավելացնել ուսուցչի բարեկրթությունը, իր կոչումին վայել վարքուբարքը, քանի որ ուսուցիչը դաստիարակում է նաև իր անձով, իր դրվածքով, իր կեցվածքով:

Այս խելահեղ վայրիվերումներով հագեցած աշխարհում հայ ուսուցիչը չպետք է մոռանա իր նվիրական առաքելությունը, չպետք է բավարարվի իր ձեռքբերումներով, այլ ընդհակառակը՝ իր կոչումը, իր անձնական օրինակը ծառայեցնի իրապես հայ մարդու, հայրենասերի ու բարեկիրթ անհատի ձևավորմանը: Հետևապես պահանջվում են ինչպես ուսուցման, այնպես էլ դաստիարակության նորովի, յուրօրինակ մեթոդաբանական մոտեցումներ, ինտերակտիվ հաղորդակցային ուսուցման նորագույն

մեթոդների ու հնարների գործադրում, հատկապես դաստիարակության, քանզի աշակերտների շրջանում

Այսօրվա համատարած անտարբերության և շատ դեպքերում դաստիարակության պակասի պայմաններում հարկ է լինում բոլոր ջանքերն ուղղել ոչ միայն մտավոր, այլև մարդկային որակները բարձրացնելուն, ճշմարիտ մտավորական անհատ դաստիարակելուն:

Այսպիսով, յուրաքանչյուր ուսուցիչ, անկախ դասավանդվող առարկայի բնույթից, պետք է կարողանա աշակերտների մոտ ձևավորել՝

1. Գիտելիք
2. Կարողունակություն
3. Արժեքային համակարգ

Գիտելիք՝ տվյալ առարկայի որակական կրթություն, որն էլ ծնում է վերջնարդյունքը:

Սովորողի վերջնարդյունքները նկարագրում են, թե կրթական ծրագրերի ավարտին սովորողը ինչ պետք է իմանա, ինչ կկարողանա անել և ինչ հասկացա՛վ:

Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Կարողունակություն՝ ստացած գիտելիքներով արձագանքելու հմտություն:

Արժեքային համակարգ՝ ձևավորվում են համամարդկային գաղափարներ (հայրենիք, մշակույթ, սեր, ընտանիք, հավատ, կրթություն, հավասարություն, մարդասիրություն և այլն):

Դարերից եկող մանկավարժական արքիոմ Է. «Հասարակության զարգացման, բարեկրթության կարևոր պայման է դաստիարակությունը, իսկ որտեղ չկա դաստիարակություն, այնտեղ չի կարող լինել նաև ճշմարիտ ուսուցում, ուսումնառություն և կրթություն»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղուզումցյան Ա., Ամիրյան Ս., «Ուսուցման պրոբլեմները ինժեներական հոգեբանության մեջ», Երևան, 1984թ.
2. Նալչաջյան Ա., «Հոգեբանության հիմունքներ», Երևան, 1997թ.
3. Պետրոսյան Հ., «Մանկավարժություն (անտիպ դասախոսություն)» Երևան, ՀԱՊՀ վերապատրաստման կենտրոն, 2011թ.
4. Բաղդասարյան Ա.Ռ., «Ներառական կրթության հիմնախնդիրները»
5. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., «Մանկավարժություն» (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2004թ.
6. Լև Վիգոտսկի, «Տարիքային հոգեբանություն»